

ՀԵՎԻ ՊՄՐԾԴԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԵԴԱՍԱՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասական հայերենի ստորադասական կապակցությամբ հանդես եկող երկրորդական նախադասությունների համակարգը օժտված է ձեկի պարագա նշող երկրորդական նախադասությունների բազմապիսի կառուցվածքային տիպերով։ Երկրորդական նախադասությունների հիշալ տիպերը կիրառության մեջ հաճախականություն են ունեցել գրաբարի հենց ծաղկման շրջանում և կարողացել են դրսերել մտքի բազմաթիվ ու բազմազան նրբերանգներ, որոնց շնորհիվ լեզուն իր դիմամիկ ուժքությամբ բացահայտել է լիզվական իրողությունների իր հարստությունը, զգորությունն ու նկարությունը։

Այդ կառուցվածքի երկրորդական նախադասությունների շարադրական պաշտոնն այն է, որ նրանք ցուց են տալիս գլխավոր նախադասության գործողության ձեր, որպիսությունը, բնույթը՝ նկարագրելով նրան զուգահեռ մի այլ գործողություն, ըստ որում գլխավոր նախադասության գործողության որակը ճշգրտելու և պարզաբանելու համար իրու ձեփ պարագա հանդես եկող երկրորդական նախադասությունը, իր հիմնական շարադրական գերը կատարելով հանդերձ, սովորաբար ունենում է իմաստալին այլ երանգներ։

Զեկի պարագա երկրորդական նախադասությունները գրաբարում կառուցվում են զերպանցապես որպէս հարաբերական բռով, մասամբ նաև օր օրինակ հարաբերականով, որպէս թէ, որպէս զի, զի, թէ, երէ, որ, մինչև, մինչ զի, իրու զի, իրու թէ շաղկապներով, իսկ գլխավոր նախադասության մեջ այդ շաղկապներին սովորաբար համապատասխանում է այնպիս հարաբերյալը։

ՈՐՊէ՛Ն. — Զեկի պարագա հանդիսացող երկրորդական նախադասությունների գերաշիռ մասը գլխավոր նախադասությանը կապվում է որպէս հարաբերական բռով։ Այս տիպի երկրորդական նախադասությունները ցույց են տալիս գլխավոր նախադասության գործողության ձեք՝ նկարագրելով նրան զուգահեռ մի այլ գործողություններ։ Այդ նշանակում է, որ զուգահեռ

նկարագրվող գործողության շնորհիվ արտահայտված գլխավոր նախադասության ձեք կարող է ունենալ, բացի իր կատարած շարադրական հիմնական պաշտոնից, նաև իմաստալին բազմապիսի երանգներու նման կառուցվածքի բարդ նախադասություններում երկրորդական մասի որպէս հարաբերականին երբեմն գլխավոր նախադասության մեջ չի համապատասխանում որևէ հարաբերյալ։

1. Կան երկրորդական նախադասությունների այնպիսի տիպեր, որոնք գլխավոր նախադասությանը միանլով որպէս հարաբերական բառով, դրսերում են գլխավոր նախադասության գործողության սոսկ ձեռ,

«Են իմ երկու գստերք որ զայր ոչ գիտեն. հանից զնոսա առ քեզ. և արաբէք ընդ նոսա որպէս հաճոյ իշէ ձեզ» (Մոկմագ, ժմթ. 8):

«... շտեսանէ որպէս պարտ է տասանել. և ոչ լսէ որպէս պարտ է խօսել, և չէ ի կենդանեաց համարի» (Պոկեբերան, հատ. Ա, Վենետիկ, 1862, էջ 110):

... թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողամբ մերոց պարտապնաց» (Մատթ. Զ 12):

Ուշագրավ է մեջքերված վերջին օրինակը, երբ երկրորդական նախադասությունը գլխավորին կապող որպէս հարաբերականին միացել է նաև և համադասական շաղկապը, որն այստեղ պարզապես հավելադրական նշանակություն ունի («Էլլ»)։ Սական ունենք նաև նույն կառուցվածքի այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնցում և շաղկապը շարադրական բռորովին այլ իմաստ է հաղորդում երկրորդական նախադասությանը, ընդգծելով վերջինիս ընդհանուր և անորոշ բնույթ կրել, այլ կերպ ասած՝ երկրորդական նախադասությունը նման գեպքերում նկարագրում է ոչ թե գլխավոր նախադասության գործողության կոնկրետ, առանձին մի ձեռ, եղանակը, միուլքը կամ որպիսությունը՝ որոշակի կերպով սահմանագծված նրա գործողության սոսկի մյուս հատկանիշներից, այլ տվյալ գործողության ձեք՝ իր

ամբողջ ժամանով, վերցրած ընդհանուր ձևով, առանց որևէ սահմանափակման։ Համեմատի՞ր՝

«Ով կին գու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս» (Մատթ. ԺԵ 28):

«Այլ իրեւ տեսանէին զթագաւորն Հայոց Վարազգատ մեծ նախարարքն Հայոց՝ թէ մանուկ բանսերթուկ է, զար ի բարոյ որոշել չգիտէ, սկսան այնուհետեւ ըստ կամցաց իւրեանց վարել զթագաւորն, որպէս և կամէին, բանիւր իւրեանց տանէին և բերէին զնա (Փաւառոսի Թիւլանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 352):

«Այս է պատուքը իմ, զի սիրեսչիք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զենք (Յովհ. ԺԵ 12):

2. Երկրորդական նախադասությունը կարող է արտահայտել նմանուրյան շարահյուսական իմաստ, այսինքն՝ գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է Երկրորդական նախադասությամբ նկարողված գործողության հար և նման, նրան համապատասխան։

«Եւ ասէ ցնա Յեսոս, Արդ, տուր զենք ի ձեռս իմ՝ զի սպանից և հեղից զարիմ քոյ, որպէս սպանիրն զու զիս և հեղիր զարիմ իմ. զի արդար եմ իւրաւամբը քան զենք, և երախտիս մեծամեծս արարի յարարածն քումը «Եղնկայ վարդապետի Կողմաց» և եղդ աղանդոց», Թիֆլիս, 1914, էջ 173):

«Եւ մի փորձեցուք զՏէր, որպէս ոմանք ի նոցանէ փորձեցին, և յօծից անտի սատակեցան (Ա. Կորնիթ. ԺԵ 9):

«Զի օրինակ մի եսու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիշչիք» (Յովհ. ԺԵ 15):

3. Հիմանէին շարահյուսական իմաստ են արտահայտում այն տիպերը, որոնց երկրորդական նախադասությունների գործողությունը ընդգծված նմանուրյան է արտահայտում գլխավոր նախադասության գործողության կատարման նկատմամբ, ձեւ շարահյուսական դերը համարյա թե այսանդ չքանում է և հիմունքի իմաստային երանգը դառնում է ամբապետող։

«Եւ արար Մովսէս հանդէս, որպէս պատուիրեաց Տէր նմա, ամենայն անդրանկաց որդուցն Խորայնի» (Թիգր. Գ 42):

Որպէս ածար զմտաւ՝ պարտ է մեզ նախ զորս առաքեմքն առ կայսր՝ արձակել, և ապա զոր ինչ հրամայիցն առնեմ անխափան» (Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփիլս, 1904, էջ 83):

Առանձնապես հիմունքի շարահյուսական իմաստ է դրսորդում, երբ երկրորդական նախադասության ստորոգյալը ասացական բայ է։

«Ահաւասիկ որդի արքային ծուլայ, թագաւորեսցէ դա, որպէս խօսեցաւ Տէր ի վերայ տանն Դաւթիս (Թ Մհացորդաց իդ 3):

Եւ այժմ խնդրեմ ի քէն զետանն զայն, որպէս ասաց Տէր լաւուր յայնմիկ» (Յեսու. ԺԵ 12):

Այս փաստերը վառ կերպով ցուց են տալիս, թե ինչպիսի սերտ աղերսի մեջ են գտնվում ձեւի և հիմունքի պարագաները՝ մի կողմից, մյուս կողմից՝ բացահայտում են հիմունքի պարագա երկրորդական

նախադասությունների առաջացումը ձեւի պարագա երկրորդական նախադասություններից։

4. Երկրորդական նախադասությունը շատ հաճախ օժաված է նամակառարքյան իմաստային երանգով այն զնպեռմ, երբ նա նկարագրում է գլխավոր նախադասության գործողության ձեր՝ համեմատություն անցկացնելով այլ առարկաների գործողության հատկանշը։

«Արդ լիզանէ ծոլովուրզու այս զամենայն որ շուրջ զմեր են, որպէս լիզանէ արշառ զգեղ դալար ի զարտի» (Թիգր. Բ 4):

«Ռայան ի ճարպոյ պարարտությունէ լցի անձն իմ, շրմամբ ցնծութեան օրնեսցէ զքեզ բերան իմ» (Մազմ. Կ 6):

«Փորձեցիր զմեզ, Աստուած, և քննեցեր, որպէս և քննի արծաթ» (Մազմ. Կ 10):

Զեւ պարագա նշող Երկրորդական նախադասության փոխարարերությունը գլխավոր նախադասության նկատմամբ համեմատարար ազատ է, Երկրորդական նախադասությունների շարադասությունը գլխավորի հարաբերությամբ լինում է առաջազար և հետադասաւա» ա) Երկրորդական նախադասությունը առաջադաս է դրվագ, երբ անհրաժեշտություն է զգացվում շեշտել Երկրորդական նախադասության բովանդակության կարուրությունը՝ չընդողացնելու, արդարացնելու կամ էլ պատճառարաններու համար գլխավոր նախադասության մատնաշղած (և ոչ այլ) գործողությունը՝ նրա տվյալ ձեռվ կատարվելը նկարագրելու միջոցով։

«Եւ որպէս նենցեր դու զարինդ են սուրբ ի վերայ մեղաուրաց, ի վրկուրին յանցաւուրաց պարգեկան և մեզ հեղող զարինս մեր ի վերայ խոստավանութեանս այսորիկ և իւրաքանչիւր թողութեան մեղաց» (Փարպ. 62):

«...Եւ արդ աւասիկ եմք ընդ ձեռամբ ձերով, որպէս նանոյ է մեզ և որպէս կամիր առնել՝ արարէք» (Յեսու. ԺԵ 25):

բ) Երկրորդական նախադասությունը դրվագ է հետադաս, երբ նա սոսկ պարզաբանում է գլխավոր նախադասության գործողության որակը, որպիսությունը կամ ձեր։

«Ինկ սուրբն ներսէս խօսէր զնդ նոսս որպէս օրէն էր, եթէ տեսէք և քաջ զմտաւ ածէր, և յիշեցէր զրանն Տեառն պատուիրանին միարանութեամբ որպէս պատուիրացն ծառայից հնազանդ կալ տերանց իւրեանց» (Թիգր. 245):

«...ոչ է ամրի սոմեր սկիզբն առնու լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զինենին. և Աստուած միայն կարող իցէ առնել յուշնէտ ինչ որպէս և կամիր» (Յզն. 91):

Սակայն որպէս հարաբերականին միացող երկրորդական նախադասություններին նախադասության կազմում կարող են համապատասխան նաև հարաբերություններ, որոնք պահուման համար ծառայում են բերքորդական նախադասությունները։ Այդ հարաբերյալներն են՝ այնպէս, այսպէս, սոյնպէս, նոյնպէսի, այս-

պիսի և այլն ցուցակն գերանումները: Գլխավոր նախադասության մեջ հարաբերյալների առկայության շնորհիվ մասերի միջև երկկողմանի կապակցություն է ստեղծվում, որի պատճառով մաքի կապը բարդ նախադասության բաղադրիչ մասերի միջև դառնում է ավելի սերտ և անմիջական:

Այնպէս... որպէս կապակցության գեպքում գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է երկրորդական նախադասությամբ նկարագրված գործողության համեմատ, նրա ձևով կամ նրա նմանությունը: Այդ նշանակում է, որ գլխավոր նախադասության գործողությունը ուղղի հարաբերում է երկրորդական նախադասության գործողության ձևին, առաջինի գործողությունը իսկ և իսկ տեղի է ունենում երկրորդականի նշան գործողության ձևով:

«Մտին Մովսէս և Ահարոն առաջի Փարաւոնի. և արարին այնպէս, որպէս պատուիրեաց նոցա Տէր» (Ելք է 10),

«Չիք ինչ որ այնպէս զայրացնցանէ զԱստուած, և ի ցասումն ածէ, և պատժապարտ մեծաց տանշանաց առնէ, որպէս և յորժամ անձին ոք սուրբ անոն յորշորշիցէ, թէպէտ և յամենայն մեղաց սուրբ իցէ, պարտի զանձն ի մեղաւորաց կողմանէ հաշումէ» (Սերեբրիանոսի ճառք Ա—ԺԵ, Վենետիկ, 1830, էջ 90):

«...Ուրպէս ասաց ինձ Հայրը, այնպէս խօսիմ» (Յովհ. ԺԲ 50):

Ինչպես կարելի է դիտել, վերոբերյալ օրինակներում երկրորդական նախադասությունները բացահայտում են գլխավոր նախադասության գործողության ձևը՝ առանց իմաստային այլ երանգ ավելացնելու Սակայն այս միևնույն կապակցությամբ կառուցվում են նաև բարդ նախադասության այնպիսի տիպեր, որոնց երկրորդական մասերը, ձևի պարագայի շարացյալական հիմնական փոմկցիան կատարելով հանդիրէ, ունեն նաև համեմատության եմաստային երանգ. վերջին հանգամանքը բնում է նրան նից, որ երկրորդական նախադասության գործողության ձևը՝ համեմատելով տարբեր առարկաների հատկանիշները միշտանց հետ:

«Ոչ ոք այնպէս յարեցութենէ լինի խելագար որպէս յարծաթիրութենէ» (Պոկ. հատ. Ա էջ 413):

«...Ուրպէս վառի եղեգն ի կայծականց հրոյ, այնպէս այրեցին ի բորբոքեալ բոցոյ» (Սասայի է 23):

«Ուրպէս ժողովի որոմնն և ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատարածի աշխարհիս» (Մատթ. ԺԲ 40):

Նման կառուցվածք ունեցող բարդ նախադասություններում գլխավոր և երկրորդական մասերի փոխարաբերությունը, շարադասության առումով, համեմատաբար աղատ է, այսինքն՝ երկրորդական նախադասությունը կարող է լինել առաջադաս և հետադաս. համեմատի՛ք»

«...Ուրպէս հայի մոմ առաջի հրոյ՝ այնպէս կորիցին մեղաւորք յերեսաց Աստուծոյ» (Սաղմ. Կէ 8):

«Այնպէս, ասէ, ուրախ լինիցին փրկեալին քո, որպէս որք ուրախ լինին ի հունձն, որք զպտուղ իւրեանց վաստակոցն ժողովին, կամ իրքն որք զաւարն բաժանեն» (Սերեբրիանոս, էջ 40):

Գրաբարում շատ տարածված են բարդ նախադասության այն տիպերը, որոնց գլխավոր և երկրորդական մասերը կազմվում են ուրպէս... նոյնպէս կապակցությամբ: Նոյնպէս հարաբերյալի առկայությունը գլխավոր նախադասության կազմում մատնանշում է վերջինիս գործողության ձևը՝ երկրորդական նախադասությամբ նկարագրված գործողության նշգրիտ նմանությամբ ու նույնությամբ, ընդգծում է գլխավոր նախադասության գործողությամբ կատարումը՝ նրան զուգահեռ երկրորդական նախադասությամբ բացահայտվող գործողությանը ուղղակի համապատասխանող ձևով:

«Եւ խալասցէ խորսնն վկայութեան և բանակ Դետացցոցն ի մէջ բանակացն, որպէս բանակեցին՝ նոյնպէս շումսցն, իւրաքանչիւր զհնտ միմեանց ըստ պետութեան» (Թիւք թ 17):

«Եւ եթէ խեղսցէ ոք զբնկը իւր, որպէս՝ արարն նոյնպէս արասցի նմա. բնկումն ընդ բնեման, ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, որպէս առնիցէ ոք զինութիւն, նոյնպէս հատուացի նմա» (Ղետ. իդ 19—20):

«Այլ զայս որպէս և լմել ոք կամիցի, նոյնպէս և ընկալցի» (Թրոնիկոն, մաս Ա, էջ 62—63):

Պետք է նկատել, որ նման կառուցվածքի ստորադասական նախադասությունների գլխավոր և երկրորդական մասերը իրենց փոխարաբերությամբ, շարադասության տեսակետից, կայուն դիրքում են հանգստավիլս. երկրորդական նախադասությունը միշտ նախորդամ է գլխավորին և երբեք հնաական չկ կարող լինել. այս հանգամանքը այդ տիպի բարդ նախադասությունների կառուցվածքաւին կարող առանձնահատկություններից մեկն է հանդիսանում:

«...Ուրպէս դու կարծես թէ այն ինչ մեզ հակառակ ինչ իցէ, նոյնպէս և մեք սամեր թէ այն քեզ հակառակ է» (Ոսկ. հատ. Ա, էջ 420):

«Եւ ասէ ցնոսա Սամիսոն. Ուրպէս արարին ընդ իս, նոյնպէս արարի ընդ նոսա» (Դատաւորք ԺԵ 11):

«...Ուրպէս էի ընդ Մովսիսի, նոյնպէս եղէց և ընդ քեզ» (Ցեսու Ա 5):

Զեր պարագա երկրորդական նախադասություն պարունակող բարդ նախադասությունները կարող են կազմվել նաև որպէս... այսպէս, որպէս... այլպէս, որպէս... այնպէս... այնպէս կապակցություններով, որոնք գործածության շատ թիւ հաճախականություն ունեն, սակայն արտահայտում են շարահյուսական միևնույն հարաբերությունները, ինչ ուրպէս այնպէս կապակցությամբ կառուցվածք բարդ նախադասությունները:

«Ուրպէս խաննեցաւ ի կարգ սուրբ ամուսնութեան աշխարհիս, այսպէս շնեմուտ ընդ մարմնաւոր պիտոյիւթ ամենայն ապականացու իրաց աշխարհիս» (Ծղիշ, էջ 192):

«Եւ նա ասէ, Այդպէս եղիցի որպէս ասացէք» (Ծնունդ Խ 10):

«Սերեթ ուրպէս նայն եհար, սա այնպէս վիրաւորեսի», կամ ուրպէս նայն սպան, այնպէս սատակեցին՝ (Նսայի Է 7):

«Նոյնպէս և ի թագաւորին Պապալ ձեռն արկանէր, երդնոյր և ասէր՝ թէ կեցից և մեռայց ի վերայ ըստ ուրպէս նախանիքն իմ ի վերալ նախնեացն բոց. որպէս

և հայրն իմ ի վերայ հօրն քո Արշակայ, սոյնպէս և ես
ի վերայ քո, բայց միայն չարախօսացն ունկն մի
դիմիկան (Թիւլ. 291):

Սակայն բացառված չեն նաև այնպիսի կազմու-
թյուններ, որոնց գլխավոր և երկրորդական նախադա-
ստիթյունները կառուցվում են «այսպիսի... ուրպէս,
եոյնպիսի... ուրպէս» կապակցություններով, որոնց
կիրառության շրջանակները խիստ սահմանափակ են:

«Ուրեմն արգասիքն ոչ եոյնպիսի մնացին» ուրպէս և
էնին, այլ զի ի լաւ դարձեալ՝ լաւ և եթ երկնոցին»
(Եղիկ 22):

Ինչպես կարելի է նկատել մեջքրդված փաստերից,
շարահյուսական իմաստի տեսակետից նման կառուց-
վածքի բարդ նախադաստիթյունները ունշավ չեն տար-
բիրվում «որպէս... այնպէս» կապակցությամբ կազմը-
ված ստորագասական բարդ նախադաստիթյուններից,
որոնք մանրամասն բննվել են վերեւում:

ՁՈՒՐ ՕՐԻՆԱԿ.— Դասական հայերնենի շարահյուսա-
կան համակարգին բնորոշ է նաև երկրորդական նախա-
դաստիթյունների այն տիպը, որը միանում է գլխավոր
նախադաստիթյանը զօն օրինակ բառակապակցությամբ,
կատարելով շարահյուսական նույն պաշտոնը, ինչ ուր-
պէս հարաբերականը, բառային իմաստով էլ հոգանիշ
լինելով նրան (աշխարհարարում նրա համարժեք է «ինչպէս» հարաբերականը): Այդ կառուցվածքի երկ-
րորդական նախադաստիթյունները ընդհանրապէս չեն
ունենում հարաբերյալ գլխավոր նախադաստիթյան կազ-
մում: Շարադաստիթյան տեսակետից ուշագրավ է այն
հանգամանքը, որ հարաբերյալ լինելու դեպքում երկ-
րորդական նախադաստիթյունը, իրեն կանոն, հետադա-
դիրը է ունենում, այսպէս:

«...և կոտորեաց զնա սրով սուսերի և զամենայն
շնաւոր ի նմա, և ոչ մնաց ի նմա և ոչ մի ապրեալ
և փախստական. և արար ընդ թագաւորն նորա՝ զօր
օրինակ արար ընդ թագաւորն երիտով» (Յասու Ժ 28).

«Կապել վՄամփան ելաթ, և առնել ընդ նա զօր օ-
րինակ արար ընդ մեզ» (Դատաւորք Ժ 10):

«Եւ զամենայն զճարպի կորզեսցէ՝ զօր օրինակ կոր-
զիցի ճարար յողակիղէ փրկութեան» (Ղևա. Դ 31):

Սակայն «զօր օրինակ» բառակապակցությամբ միա-
ցող երկրորդական նախադաստիթյուններին զլիավորում
կարող են համապատասխանել նաև այդպէս, եոյնպէս
և այն հարաբերյալներ, որոնց առայության պատճա-
ռով երկրորդական նախադաստիթյուններն ընդհանրա-
պես դրվում են առաջադաս, այսպէս»

«Զօր օրինակ զնայ ծառայ իմ ծասայի մերկ և բոկ,
այդպէս զերիս ամս եղիցին նշանք և արուեստք եղիպ-
տացոցք և նթովպացոց» (Յասու Հ 3):

«... Զօր օրինակ արար զուարակին մեղաց. եոյնպէս
արասցէ և նմա» (Ղևա. Դ 20):

ՈՐՊէՍ ԶԻ.— Գրաբարում կազմվում են նաև ալ-
պիսի բարդ նախադաստիթյուններ, որոնց երկրորդական
մասերը գրավորին միանում են ուրպէս զի բարդ
շաղկապով: Սակայն նման կառուցվածքի դեպքում
ուրպէս զի շաղկապին զլսավոր նախադաստիթյան մեջ,
իրեն կանոն, անպայման համապատասխանում, է
հարաբերյալը, որի շնորհիլ էլ իրեն նպատակի պա-

րագա կիրավող երկրորդական նախադաստիթյունը
կատարում է այս զեպքում ձեւի պարագայի հիմնական
շարահյուսական պաշտոն: Ֆնայած դրան, երկրորդա-
կան նախադաստիթյունը, այնուամենայնիվ, օժոված
է լինում նաև նպատակի իմաստային երանգով:
«Այնպէս խօսեցարուր և այնպէս արարէր, ուրպէս
զի պատուիթեան օրինօրն իցէր գտանլոց» (Թուղթ
Յակովարայ Բ 12):

«Եւ երթևալ Առանձար և գումարն որ ընդ նմա՝ այն-
պէս շնորհցաւ նմա լԱստուծոյ, ուրպէս զի տեսին
զրանակն Պարսից, և զնոր վերջապահ թևով միով
անկեալ՝ զրազում հանեին ընդ սոր, և զալս փա-
խրստական արարեալ արկանէին ի զօրն Պարսից» (Փարապ. 69):

«Թէպէտ և ունիցի սր ինչս և ստացուածն բազում՝
վարեսց զնոսա այնպէս, ուրպէս զի յևս սակաւ ինչ
ժամանակի լրանելոց է» (Ոսկ. Մեկնութիւն Սուրբ
Աւտարանի, Է 55):

ՈՐՊէՍ ԹԻ.— Այս բարդ շաղկապով միացող երկ-
րորդական նախադաստիթյունները նույնպես կառուց-
վում են երկակի կապակցությամբ՝ պարտադիր կեր-
պով հարաբերյալի առկայությամբ հանդիր զլսավոր
նախադաստիթյան մեջ, ըստ որում երկրորդական նա-
խադաստիթյան ձեւի պարագա լինելու հանգամանքը
ամոռզչպին կախված է այդ հարաբերյալի առկայու-
թյունից: Տվյալ զնպքում երկրորդական նախադասու-
թյունը միաժամանակ արտահայտում է շարահյուսա-
կան այնպիսի զուգագույն իմաստ, ըստ որի նրանով
որպէս հաղորդումը երկրայական ընույթ է կրում.
զլսավոր նախադաստիթյան զործողության ձեւը տեղի է
ունենում երկրորդական նախադաստիթյան զործողու-
թյանը կարծեցյալ նմանությամբ կամ համապատաս-
խանությամբ: Այդ նշանակում է, որ զլսավոր նախա-
դասության զործողության ձեւը զրսկորպում է նրան
զուգագույն մի այլ հարաբերյալներ կողմէն նմանություն նկարա-
գրելու միջոցով:

«...այնպէս պեղող ապանին [գնանդերան], ուրպէս
թէ հանդերձն ընդ մարմինն կարեալ իցէ» (Ոսկ. Հատ.
Ա Է 68—9):

«...այնպէս թուէր՝ ուրպէս թէ շնորհուկս արարեալ
նմա զրծեցին զայն» (Ոսկ. Մեկնութիւն Սուրբ Աւտ-
արանի, Է 175):

«...այնպէս գրէ ոչ կարգայ, և զննթեցուածն այնպէս ա-
սէ անսայթաք, ուրպէս թէ զրոցն» (Փարապ. 201):

«Հի.՝ Կիրառության մեջ համախականություն ու-
նեն զի շաղկապով միացող երկրորդական նախադա-
ստիթյունները իրեն ձեւի պարագա, որոնց զլսավորում
անպայման, իրեն կանոն, համապատասխանում է
այնպէս հարաբերյալը նվ իրոք, նման ափի երկրոր-
դական նախադաստիթյունները կարող են ձեւի պարա-
գայի շարահյուսական զեր կատարել միայն այն զեպ-
քում, երբ զլսավոր նախադաստիթյան մեջ առկա է
ձեւի պարագայի անվանական (ձևական) պաշտոնով
հանդիս եկող հարաբերյալը, որը զուրի լինելով նյու-
թական կոնկրետ իմաստից, իր սեալ բովանդակու-
թյունը ստանում է երկրորդական նախադաստիթյան
շնորհիլ Բացի այդ, եթե հարաբերյալը վերցնենք գըլ-
իավոր նախադաստիթյան բառային կազմից, զի շաղ-

կապով միացող երկորդական նախագասությունները անմիջապես կարտահայտեն պատճառային կամ նպատակային հարաբերությունները Համեմատի՛ր՝

1. «... շնորհըն այնպէս հանգեան ի նմա, զի մեծայն նշանս և բժշկութիւնս առնէր հիւանդաց, ուր գէպ լինէր, զմոլորութիւնս զարձուցանէր» (Թիւզ. 113):

2. «...շնորհըն հանգեան ի նմա, զի մեծամեծ նշանս և բժշկութիւնս առնէր հիւանդաց»...:

3. «Եւ այնպէս շանայ սատանայ, զի զամենայն ոք ի բարւոք ակնկալութիւնէ վրիպեցուցէ, և ի սնուաի յոյս կապիցէ» (Եղն. 74):

4. «Եւ շանայ սատանայ, զի զամենայն ոք ի բարւոք ակնկալութիւնէ վրիպեցուցէ»:

ինչպես կարելի է վերոբերյալ շորս բարդ ստորագասկան նախադասությունների պարզ համեմատությունից նկատել, 2-րդ համարով ցույց տրված երկրորդական կ ամեն անապատասխան հարաբերյալ, զրկվել է 1-ին համարում իր կատարած ձեր պարագայի շարահյուսական պաշտօնից և հանդես է եկել սոսկ պատճառական հարաբերությամբ, իրեւ պատճառի պարագայ ինչ 4-րդ համարով բերված երկրորդական նախադասությունը, չունենալով գլխավորում համապատասխան հարաբերյալ, զրկվել է 3-րդ համարում իր կատարած ձեր պարագայի շարահյուսական պաշտօնից և հանդես է եկել իրեւ նպատակի պարագայ Ասվածից հետևում է այն, որ զի շաղկապով միացող երկրորդական նախադասությունների ձեր պարագայի շարահյուսական ֆունկցիայով հանդես գալը պայմանավորված է գլխավորում համապատասխան հարաբերյալի առկայությամբ:

Նման կառուցվածքի երկրորդական նախադասությունները, իրենց կատարած հիմնական շարահյուսական պաշտօնին հետ մեկտեղ, իրեւ առանձին իմաստային նրբերանգ, զրկուրում են նաև նպատակային հարաբերությունների վերաբերյան ստորոգյալը, իրեւ կանոն, լինում է 1-ին կամ 2-րդ պատճենի բայաձեւերով. հենց այս վերջին հանգամանքն է, որ օժտում է երկրորդական նախադասությունը նպատակի շարահյուսական իմաստի երանգով:

«Ալպա բիւրու բիւրուց կոտորէին, և հաղարս հազարաց, զի այնպէս սոսաւ հրաման ի թագաւորէն, զի ամենակի բրիտանեայ անոն ի սահմանս նորա մի գացիր» (Թիւզ. 197):

«...Այնպէս ընթացարուք զի նասանիցէ» (Թուղթ առ Կորնթացին Ա, թ 24):

«Զայս ասերով՝ ահիւ սպառնալեացն կամեցաւ ի հաւասս ձեր զիա. և այնպէս հաւանեցուցանել՝ զի մի անհնարին իրսն վարկցի» (Ոսկ. Մեկնոթին Սուրբ Ամետարանի, էջ 243):

Զի շաղկապով միացող երկրորդական նախադասությունների բնորոշ մի առանձնահատկությունն էլ այն է, որ նրանք, որպես կամոն, շարադասական մեկ օրինաշափություն սանեն, այդ այն է, որ նրանք երբեք պառաշադաս չեն լինում, այլ հանդես են գալիս միշտ հետադաս դիրքում. Համեմատի՛ր՝

«Այլ Աստուած այնպէս պատուել զմարդն կամեցաւ, զի առ լաւութեանցն խելամուտ լինելոյ, զանձնիշանուրիւնն պարզեցաւ նմա» (Եղն. 30):

«...այնպէս ճեպով հասուցին սադրիչքս ահօրէնութեանն զշազարաւություն ի վերայ Հարց, զի և տաւուր միով յառաջ ժամանեցին խոյս տալ ի հաղանէն և անձին նոգալ, և ոչ ինքն կարողիկոս նոնան» (Փարա. 145):

«...այնպէս արբեցեալ էր ախտին, զի զամենեցուն տէրն ընդ երեսուն արծարոյ վանանեաց» (Ոսկ. հատ. Ա, էջ 413):

Եթէ, Թէ.— Այս շաղկապներով միացող երկրորդական նախադասությունները հանդիսանում են շարահյուսական հոմանիշ զի շաղկապով միացող երկրորդական նախադասություններին և օժտված մն բերականական նույն հատկանիշներով; ինչ վերջիններուն Հետևարար կրկնություններից խուսափելու համար այսեղ շենք շարադրի այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են ինչպես իր վերաբերյալ, որ առանձնահատկություններին, Միայն ավելացնենք, որ այդ երկու տիպերի միջև եղած տարրերությունը սպառվում է միայն կիրառակիցին հաճախականությամբ. այլ կերպ ասած, երէ և թէ շաղկապով միացող երկրորդական նախադասություններին, Միայն ավելացնենք, որ այդ երկու տիպերի միջև եղած տարրերությունը սպառածությունը պարզապես է, քան զի շաղկապով կառուցվող երկրորդական նախադասությունները:

«...այնպէս պարտ է իմանալ, երէ Հոգին Սուրբ լրովն գրէ զբարերարութիւնն» (Սեդ, 53):

«...նմա այնպէս թումցաւ, երէ զայն շար ինչ կամացն հեճուկս Ներսիսի առնիցէ ի կենանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն՝ զոր ունէր ընդ նմա» (Թիւզ. 345):

«Եւ ի տալ Զրուանայ զբարսմունս ցմրմիզդ և օրինել զնա, մատուցեալ Արհմենի առաջի Զրուանայ՝ ասէ ցնա. ո՞լ այնպէս ովասեցեր՝ թէ ո ոք յերկուց որդոցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից» (Եղն. 80):

«Պարզեա զենու մի ընդ երկինս, այլ լաղցատացն ձեռու, երէ յաղցատսն ձկիցես, այնպէս համարեսչիր թէ յերկնիցն կատարս հասուցեր» (Ոսկ. հատ. Ա, էջ 177):

ՈՐ.— Շարահյուսական հոմանիշի արժեքով հանդէս է գալիս նմա որ շաղկապով միացող երկրորդական նախադասությունների այն տարատեսակը, որը գործածության շատ ավելի սեղմ ոլորտ ունի, քան նախորդը Սակայն ուղարկավ է, որ նման կառուցվածքի երկրորդական նախադասությունները հետադաս լայն ծավալ նվաճելով, դառնում են տվյալ կառուցվածքի համարյա թե միակ տիրապետող տիպը:

«Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչև զհարց և զհաւուց և զիւր արարս և զզարս կանանց ևս եղ ի վերայ և ետ և տումեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արբումի» (Եղիշե, էջ 139),

ոլով ոք կայցի այնպէս թշուառական, որ կամաւ այնշափ գործ գործիցէ. և անձամբ զանձն ծանակ առնիցէ...» (Ոսկ. հատ. Բ էջ 504).

Միջ.— Գրաբարում ունենք ինչ հարաբերական բառվածքը երկրորդական նախադասություններ, որոնք գլխավոր նախադասության գործողության նկատմամբ հանդես են գալիս շարահյուսական երկարի հարաբերությամբ. որտեղ խալածում են ուղիղ խնդրի և ձեռի պարագայի շարահյուսական պաշտօնները. Ուղիղ խնդրի պաշտօնը կատարելու պատճառով ինչ հարաբերականը իր վրա ստացել է զ նախդիրը իրու որոշական, սակայն ամբողջ հազրդման նկատմամբ երկրորդական նախադասությունը գերազանցապես արտահայտում է ձեռի պարագայի պաշտոն:

ԱՀՀաւասիկ գուստը իմ կոյս, և հարճ նորա. հանից զնոսա արտաքս, և լլիցիք զնոսա, և արարէք ընդ նոսա զինչ հաճու է յաշ ձեր (Դատաւորք ԺԵ 24).

ԶՈՐ.— Երկրորդական նախադասությունները գելխավորին կարող են միանալ նաև որ հարաբերականի որոշականը (այսինքն՝ զ. հաջականով կազմված = զոր), որին գլխավոր նախադասության մեջ պարտադիր կերպով համապատասխում է այնպէս հարաբերայլը: Այս տիպի երկրորդական նախադասությունները նույնպես շատ արածված չեն: Շարադասության տեսակեալից նրանք սովորաբար առաջադաս են ինուում:

«Եւ ասէ Սիրա ցարքալ. Ըստ ամենայնի զար հրաման եա տէր իմ արքայ ծառայի իրում, — այնպէս արացէ ծառայ բռ» (Բ Թագ. Բ 11):

ՄիջԶ.— Այս շաղկապով միացող երկրորդական նախադասությունները ցուց են տալիս գլխավոր նախադասության գործողության ձեռ՝ նրանից առաջացած մի անսպասելի, շննթաղովով գործողություն նկարագրելու միջոցով: Այդ նշանակում է, որ երկրորդական նախադասությունը օժտված է հետեանքի շարահյուսական իմաստի երանգով: Նման կառուցվածքի բարդ նախադասություններում գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխհարաբերությունը, շարադասության առումով, ընդհանրապես կայուն է. երկրորդական նախադասությունը սովորաբար հետադաս դիրքում է լինում:

«Կողոպտեցին հանին և ոչ ինչ զոր ընդ իրն ունէք. այնպէս ձաղեցին աղքատութեամբ, մինչ հաց մուրանալին և բերեցին նմա իր ծառայքն» (Եղիշե, էջ 139):

ՄիջԶԵն.— Գրաբարը կազմում է նաև այնպիսի երկրորդական նախադասություններ, որոնք գլխավորին կապվում են մինչև շաղկապով: Այդ կառուցվածքի երկրորդական նախադասությունները արտահայտում են շարահյուսական այնպիսի իմաստ, ըստ որի նրանք խացած, ընդգծված կերպով նկարագրում են գլխավոր նախադասության ձեռից առաջացած մի գործողություն, որն անսպասելի, անհավանական է թվում. և տրամաբանորեն չպետք է բխեր գլխավորի գործողությունից: Այդ պատճառով երկրորդական նախադասության բովանդակությունը հակադրվում է մնացած բռլոր հավանական մտքերի, որոնք լուելայն ենթագրություն են: Տվյալում կարող են պարագաները կատարել իրավունքը, շարադասության առումով, համեմատաբար կայուն է. երկրորդական սովորաբար հետադաս է լինում գլխավորին:

«Այնպէս արժանի հաւատարմութեան եղև Ոնեսիմու, մինչ զի այնպիսի իրք հաւատալին նմա» (Ոսկ. հատ. Ա էջ 649):

Իրենի թէ, իրը թէ: Զեկի պարագայի շարահյուսական պաշտոնով հանդես են գալիս նաև այն երկրորդական նախադասությունները, որոնք գլխավոր իրենից կապվում են իրել թէ, իրու թէ շաղկապենքով, որոնց գլխավոր նախադասության մեջ, իրը կանդաւ:

սությունները, կատարելով հանդերձ իրենց հիմնական շարահյուսական ֆունկցիան (ձեռի պարագայի պաշտոնը), դրսեորում են հետևանքի իմաստային նրկերանգ: Այս տիպի երկրորդական նախադասությունների շարադասությունը կայուն է: Նրանք հանդես են գալիս միշտ հետագա դիրքում:

«Եւ այնպէս բարձրացուցանէին զպաշտօնն սրբաթեան, մինչև ոմանք ի գառն գահնացն մեծաէս պաղցրութիւն անկանէր ընդ լսելիս նոցա (Եղիշե, էջ 196):

«Եւ այնպէս միշտամուի եղեալ հանգամանօք օրինապատճամացն, մինչև ընաւ արտաքու իրեանց ընակութեանել» (Կորին, էջ 54):

Մեշքրված օրինակներում երկրորդական նախադասությունները վերաբերում են գլխավոր նախադասության ստորոգյալին՝ նկարագրելով նրա գործողության ձեռը, նրանից առաջացած մի այլ գործողություն ցուց տալու միջոցով: Սակայն պատահում են նաև ալնպիսի բարդ նախադասություններ, որոնց երկրորդական մասերը վերաբերում են ոչ թե գլխավոր նախադասության ստորոգյալին, այլ մակրայով արտահայտած ձեռի պարագային:

«Եւ այնպէս հեշտ զգերութիւնն համարէր, մինչև պարծել ևս ի կապանս գերութեանեա (ՍԵԿԾ, 36):

Ուշագրավ է, որ վկայված օրինակում երկրորդական նախադասության ստորոգյալը արտահայտված է անորոշ գերայալով ուստի և այն զերբայական նախադասությունն է, որի դիմային, ժամանակային և եղանակային հարաբերությունները կարող են ըմբռնվել բնագրից, ավագ զեպքում՝ գլխավոր նախադասության ստորոգյալից, որն նման զեպքերում բարդ նախադասության մասերից միայն մեկը (սովորաբար երկրորդական նախադասությունը) կարող է զերբայական նախադասությունների լինել, իսկ յուուր անպայման պետք է դիմավոր բայով ստորոգյալ ունենաւ:

ՄիջԶ Զին.— Երկրորդական նախադասությունները կարող են գլխավորին միանալ նաև մինչ զի բարդ շաղկապով: Նման կառուցվածքներում երկրորդական նախադասությունը, բացահայտելով հանդերձ գլխավոր նախադասության գործողության ձեռը, նկարագրում է նրանից առաջացած նույնիսկ այնպիսի գործողությունն, որը անսպասելի, անհավանական բնուվթ է կրում: Նա իր անհավանականությամբ հակադրվում է մնացած բռլոր հավանական, սպասելի, ենթազրովով գործողություններին, որոնք լուելայն ընկալվում են: Այստեղ նույնպես առկա է հետևանքի շարահյուսական իմաստ: Գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխհարաբերությունը, շարադասության առումով, համեմատաբար կայուն է. երկրորդական սովորաբար հետադաս է լինում գլխավորին:

«Այնպէս արժանի հաւատարմութեան եղև Ոնեսիմու, մինչ զի այնպիսի իրք հաւատալին նմա» (Ոսկ. հատ. Ա էջ 649):

Իրենի թէ, իրը թէ: Զեկի պարագայի շարահյուսական պաշտոնով հանդես են գալիս այն երկրորդական նախադասությունները, որոնք գլխավոր իրենից կապվում են իրել թէ, իրու թէ շաղկապենքով, որոնց գլխավոր նախադասության մեջ, իրը կանդաւ:

անպայման Համապատասխանում է այնպէս հարաբերությունը։ Սակայն այդ բարդ շաղկապներով միացած երկրորդական նախադասությունները, ձևի պարագայի նրանց շարահյուսական հիմնական իմաստին զուգահեռ, արտահայտում են երկրայական երանք։ Այդ նշանակում է, որ գլխավոր նախադասության գործողության ձեզ դրսնորդում է՝ նրան զուգահեռ մի այլ ոչ-իրական գործողություն նկարագրելու միջոցով։

«Այնպէս պարտ և պատշաճ է պատրաստել միայնակցացն իրու թէ վաղին մեռանին, և այնպէս պարտ է վարել զմարմին՝ իրու թէ բազում ժամանակս ընդ նմա կալոց իցէ» (Ծագր Պոնտացի, Կարթ և մատենագրութիւնք, Վենետիկ, 1907 թ., էջ 35)։

Ի՞րո՛՛ Զի՞։ — Համաման շարահյուսական հարաբերություն են նշում այն երկրորդական նախադասությունները, որոնք գլխավորին կապվում են իրու զիշաղկապով, և ունեն նույն առանձնահատկությունները, ինչ նախորդ տիպի երկրորդական նախադասությունները։

«...այնպէս մարդասէր է, իրու զի վասն փրկութեան մարդոյ որ ինչ վայել են բանք պատուի նորա՝ վասն այնորիկ արհամարհէ զայն» (Ոսկ. Հատ. Բ էջ 601)։



Այսպիսով, տալով ձևի պարագայի երկրորդական նախադասությունների ընդհանուր նկարագիրը, հանգում ենք սա եղբակացության, դասական հայերենը մինչև մատենագրությամբ հաստատվելը արդեն մշակված, ճոխ ու ճկում լեզու է եղել, դարերի ընթացքում հարանոլով գործածությամբ կոկված ու կատարելագործված, ընդունակ լինելով ամենատարբեր վերացական գաղափարներ, բարդ ու նրբին մտքեր արտահայտելու նա իր շարահյուսական համակարգում ստեղծել է քերականական այնպիսի միջոցներ, առանց որոնց ոչ մի բաղաբարթված ու զարգացած լեզու չի կարող գոյություն ունենալ։ Այդ փաստը, իր հերթին, նշանակում է, որ դասական հայերենը ոչ թե արհետական ու շերմոցային լեզու է եղել, այլ բազմադարյան հայ ժողովրդի շրթների վրա թրթուացող կենդանի, պերճ ու չքնաղ մի լեզու, որով մարմնավորվել և զարերին է հանձնվել հայ ժողովրդի հոգեկան և իմացական հանճարը։

